



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 325/10

Վարդան ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆ ու Նելլի ԴԱՆԻԵԼՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
2018 թվականի փետրվարի 20-ին հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ,*

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով 2009 թվականի դեկտեմբերի 14-ին ներկայացված վերոնշյալ
գանգատը,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից ներկայացված
դիտարկումները եւ դիմումատուների կողմից ի պատասխան ներկայացված
դիտարկումները,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ

1. Դիմումատուները՝ պրն Վարդան Նալբանդյանը եւ տկն Նելլի Դանիելյանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, ովքեր ծնվել են համապատասխանաբար 1949 եւ 1987 թվականներին եւ ապրում են Երեւանում: Նրանց Դատարանում ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ն. Բաղդասարյանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

Գործի փաստական հանգամանքները

3. Գործով փաստերն այնպես, ինչպես ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

4. Պրն Վարդան Նալբանդյանը (առաջին դիմումատու) տկն Նելլի Դանիելյանի (երկրորդ դիմումատու) մահացած մոր՝ Ա.Ն.-ի եղբայրն է:

5. Առաջին դիմումատուն եւ Ա.Ն.-ն եղել են 45.5 քմ ընդհանուր մակերեսով տան համասեփականատերեր: Տունը գտնվում է 0.14323 հա մակերեսով հողամասի վրա, որի համասեփականատերերն են եղել առաջին դիմումատուն եւ պետությունը (ըստ երեւոյթին, հողամասի 12/13-րդ մասը պատկանել է պետությանը): Տունը եւ հողամասը գտնվում են Երեւան քաղաքի Արամի 68 հասցեում: Ա.Ն.-ի մահվանից հետո դիմումատուներից երկուսն էլ հավասար բաժիններով ժառանգել են տան՝ Ա.Ն.-ի մասնաբաժինը:

*1. Վարույթների առաջին խումբը եւ առաջին դիմումատուի՝
հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չգրանցելը*

6. 2004 թվականի ապրիլի 7-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը վարույթ է ընդունել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ ԱԳԿՊԿ) Կենտրոն տարածքային ստորաբաժանման եւ որպես երրորդ կողմ՝ Երեւանի քաղաքապետարանի դեմ առաջին դիմումատուի կողմից ներկայացված հայցը: Հայցը բավարարելով՝ Վարչական շրջանի դատարանը ճանաչել է առաջին դիմումատուի սեփականության իրավունքը՝ i) տանը հարակից՝ 21.8 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառույցի նկատմամբ, ii) 18.7քմ մակերեսով լրացուցիչ հողամասի նկատմամբ, ինչպես նաեւ դրա վրա կառուցված (նույնպես 18.7քմ մակերեսով) օժանդակ շինության նկատմամբ, որոնք բոլորն էլ գտնվում են Երեւան քաղաքի Արամի 68 հասցեում: Վարչական շրջանի դատարանը նաեւ պարտավորեցրել է ԱԳԿՊԿ-ի Կենտրոն տարածքային ստորաբաժանմանը գրանցել առաջին դիմումատուի՝ վերոնշյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:

7. 2004 թվականի մայիսի 31-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը Երեւանի քաղաքապետի ներկայացրած վերաքննիչ բողոքից հետո անփոփոխ է թողել Վարչական շրջանի դատարանի վճիռը:

8. 2004 թվականի հուլիսի 23-ին բարձրագույն դատական ատյանը՝ Վճռաբեկ դատարանը, մերժել է Երեւանի քաղաքապետի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ եւ անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի 2004 թվականի մայիսի 31-ի վճիռը: Նույն օրը վերջին վճիռը դարձել է կատարման ենթակա:

9. 2004 թվականի օգոստոսի 27-ին Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ) Երեւան քաղաքի ստորաբաժանման կողմից կատարողական վարույթ է հարուցվել՝ Վերաքննիչ դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա:

10. 2005 թվականի փետրվարի 18-ին կատարողական վարույթի ընթացքում ԱԳԿՊԿ-ի կողմից Արամի 68 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական: Այս վկայականով հաստատվում է, *inter alia* (*ի թիվս այլնի*), առաջին դիմումատուի՝ 21.8 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառույցի եւ 18.7քմ մակերեսով օժանդակ շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:

11. 2005 թվականի հուլիսի 15-ին հարկադիր կատարողը որոշում է կայացրել կատարողական վարույթն ավարտելու մասին այն հիմքով, որ կատարել է կատարողական թերթում նշված պահանջները:

12. Առաջին դիմումատուն հայց է ներկայացրել ԴԱՀԿ-ի դեմ՝ վիճարկելով հարկադիր կատարողի՝ 2005 թվականի հուլիսի 15-ի որոշումն այն հիմքով, որ կատարողական թերթն ամբողջությամբ չի կատարվել՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԱԳԿՊԿ-ի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից չի գրանցվել 18.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

13. 2006 թվականի հունվարի 31-ին Երեւանի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է նրա հայցը: Այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, հետեւաբար այն դարձել է վերջնական:

14. 2006 թվականի մարտի 9-ին ԴԱՀԿ-ն վերսկսել է կատարողական վարույթը:

15. Առաջին դիմումատուն պնդում է, որ 18.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը երբեւէ չի գրանցվել, իսկ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի մայիսի 31-ի վճիռը երբեւէ ամբողջությամբ չի կատարվել:

2. *Վարույթների երկրորդ խումբը եւ Ա.Ն.-ի՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չգրանցելը*

16. 2005 թվականի հունիսի 1-ին Ա.Ն.-ն մահացել է: Նա կտակ էր կազմել, համաձայն որի՝ իր ամբողջ գույքը, ներառյալ՝ «տան եւ հողամասի իր մասնաբաժինը» որպես ժառանգություն կտակել էր առաջին դիմումատուին:

17. 2005 թվականի օգոստոսի 16-ին առաջին դիմումատուն հայց է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ պահանջելով հաստատել Ա.Ն.-ի սեփականության իրավունքը՝ որպես Երեւան քաղաքի Արամի 68 հասցեում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի համասեփականատեր:

18. 2005 թվականի սեպտեմբերի 30-ին Վարչական շրջանի դատարանը բավարարել է նրա հայցը: Այն նաեւ հաստատել է, որ Ա.Ն.-ի՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման: Այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, եւ վճիռը կայացնելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում այն դարձել է կատարման ենթակա:

19. 2005 թվականի հոկտեմբերի 24-ին ԴԱՀԿ-ի Երեւան քաղաքի ստորաբաժանման կողմից կատարողական վարույթ է հարուցվել Վարչական շրջանի դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա:

20. 2005 թվականի դեկտեմբերի 22-ին առաջին դիմումատուն, լինելով ըստ կտակի Ա.Ն.-ի ժառանգ, ձեռք է բերել Ա.Ն.-ի գույքի նկատմամբ ժառանգական իրավունքի վկայագիր, որով հաստատվում է, որ իրեն է պատկանում Երեւան քաղաքի Արամի 68 հասցեում գտնվող տան 1/4 մասը: Նույն օրը նմանատիպ վկայագրով հաստատվել է, որ երկրորդ դիմումատուն նույնպես Ա.Ն.-ի ժառանգն է: Այսպիսով, Ա.Ն.-ի գույքը հավասարապես բաժանվել է առաջին եւ երկրորդ դիմումատուների միջեւ:

21. 2006 թվականի հունվարի 20-ին ԱԳԿՊԿ-ի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական, որով գրանցվել են դիմումատուների՝ սեփականության իրավունքի վկայականներով հաստատված սեփականության իրավունքները: Մասնավորապես, վկայականով նախատեսվում էր, որ երկու դիմումատուներն էլ Արամի 68 հասցեում գտնվող տան սեփականատերերն էին, ավելի կոնկրետ՝ 18.7քմ ընդհանուր մակերեսով բնակելի տարածքը եւ 21.8 քմ մակերեսով օժանդակ շինությունը պատկանում էին միայն առաջին դիմումատուին, իսկ 0.14323 հա մակերեսով ամբողջ հողամասն առաջին դիմումատուի եւ պետության համատեղ սեփականությունն էր: Վկայականում չէին նշվում Վարչական շրջանի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 30-ի վճռով հաստատված սեփականության իրավունքները՝ համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ:

22. Դիմումատուները պնդում են, որ 0.14323 հա մակերեսով հողամասի նկատմամբ Ա.Ն.-ի համատեղ սեփականության իրավունքը երբեւէ չի գրանցվել, այդ իսկ պատճառով իրենք չեն կարողացել ստանալ այդ գույքը որպես ժառանգություն:

3. *Դիմումագրուների գույքի հարկադիր օտարումը*

23. 2005 թվականի օգոստոսի 6-ին առաջին դիմումատուն եւ Ա.Ն.-ն առաջարկ են ստացել «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գրասենյակ) կողմից: Գրասենյակը տեղեկացրել է նրանց, որ պետությունը պահանջում է Արամի 68 հասցեում գտնվող տունը եւ հողամասը, ուստի դրանք ենթակա են հարկադիր օտարման: Այն առաջարկել է առաջին դիմումատուին եւ Ա.Ն.-ին ստորագրել պայմանագիր՝ իրենց սեփականության իրավունքները փոխհատուցման դիմաց պետությանը փոխանցելու վերաբերյալ: Ըստ էության, այդ առաջարկը մերժվել է:

24. 2006 թվականի փետրվարի 20-ին՝ Ա.Ն.-ի մահվանից հետո, երկու դիմումատուներն էլ, որպես Ա.Ն.-ի ժառանգներ, նորից ստացել են նույն առաջարկը: Այսպիսով, դիմումատուները մերժել են նաեւ այդ առաջարկը:

25. 2006 թվականի մարտի 7-ին Գրասենյակը դիմումատուների դեմ հայց է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ պահանջելով՝ i) պարտավորեցնել նրանց ստորագրել պայմանագիր՝ պետության կարիքների համար նրանց գույքն օտարելու վերաբերյալ, եւ ii) վտարել նրանց եւ նրանց ընտանիքների անդամներին:

26. 2006 թվականի մարտի 28-ին դիմումատուները պայմանագիր են կնքել Գրասենյակի հետ՝ փոխհատուցման դիմաց պետության կարիքների համար գույքը վերցնելու վերաբերյալ: Ինչպես նշվել է պայմանագրում, փոխանցվելիք գույքը բաղկացած է եղել 18.7քմ մակերեսով տնից, 21.8 քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունից, 0.14323 հա մակերեսով հողամասի 1/13-րդ մասից, որոնք պատկանում են միայն առաջին դիմումատուին, եւ 45.5 քմ ընդհանուր մակերեսով տնից, որը երկու դիմումատուների համատեղ սեփականությունն է: Նշված պայմանագրում ոչ մի անդրադարձ չի կատարվել դիմումատուների՝ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքներին, որոնք կատարման ենթակա վերոնշյալ վճիռների առարկան են: Այսպիսով, Գրասենյակի՝ դիմումատուների դեմ ներկայացրած հայցով վարույթն արդյունքում կարճվել է:

27. 2007 թվականի հոկտեմբերի 24-ին ԱԳԿՊԿ-ի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից մերժվել էր առաջին դիմումատուի ներկայացրած դիմումը (ըստ երեւոյթին, վերոնշյալ վճիռներից ծագող իր սեփականության իրավունքների գրանցման վերաբերյալ) այն հիմքով, որ գույքը հարկադիր կարգով օտարվել էր պետության կողմից, տվյալ շինություններն արդեն քանդվել էին, եւ այդ պահին պետությունն էր համարվում այդ հողամասի սեփականատերը:

4. *Դիմումատուների կողմից հարուցված վարույթները նրանց գույքի հարկադիր օտարումից հետո*

28. 2008 թվականի հուլիսի 9-ին դիմումատուները դիմել են Երեւանի քաղաքացիական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել դիմումատուների եւ Գրասենյակի միջեւ 2006 թվականի մարտի 28-ին կնքված պայմանագիրը՝ փոխհատուցման դիմաց պետության կարիքների համար գույքը վերցնելու վերաբերյալ: Դիմումատուները պնդել են, որ վերոնշյալ պայմանագիրը կնքվել է Սահմանադրության եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների եւ պահանջների խախտմամբ:

29. 2008 թվականի հոկտեմբերի 10-ին Երեւանի քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուների պահանջը՝ գտնելով, *inter alia*, որ դիմումատուները բաց են թողել դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված մեկ տարվա ժամկետը: Երեւանի քաղաքացիական դատարանը գործն ըստ էության չի քննել՝ նշելով, որ վաղեմության ժամկետի կիրառումն ինքնին առանձին հիմք է դիմումատուների պահանջը մերժելու համար:

30. Դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել վերոնշյալ վճռի դեմ, սակայն նրանց բողոքը մերժվել է Վերաքննիչ դատարանի 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ: Բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը քննել է գործն ըստ էության, սակայն եկել է այն եզրահանգման, որ տվյալ պայմանագրերը վիճարկելու հիմքերը հիմնավորված չեն, իսկ դիմումատուների կողմից մատնանշված իրավական ակտերը՝ ոչ վերաբերելի:

31. Դիմումատուները վճռաբեկ բողոք են ներկայացրել վերոնշյալ որոշման դեմ, սակայն 2009 թվականի հունիսի 17-ին Վճռաբեկ դատարանի կողմից այն վարույթ չի ընդունվել հիմքերի բացակայության պատճառով:

ԲՈՂՈՔԸ

32. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն մասին, որ Վերաքննիչ դատարանի 2004 թվականի մայիսի 31-ի՝ հոգուտ առաջին դիմումատուի կայացված վճիռը եւ Վարչական շրջանի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 30-ի՝ հոգուտ Ա.Ն.-ի կայացված վճիռը չկատարելը հանգեցրել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ իրենց իրավունքների խախտման:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

33. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն մասին, որ իրենց օգտին կայացված ներպետական վճիռները չկատարելով՝ խախտվել են իրենց՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքները:

Ա. Կառավարության նախնական առարկությունները

34. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները չեն կատարել վեցամսյա ժամկետում իրենց գանգատները Դատարան ներկայացնելու պահանջը: Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 17-ի որոշումը չպետք է համարել վերջնական որոշման ամսաթիվ, քանի որ, հաշվի առնելով այն փաստը, որ 2006 թվականի մարտի 28-ին դիմումատուները պայմանագիր են կնքել Գրասենյակի հետ, իրենք կամավոր հրաժարվել են տվյալ գույքի նկատմամբ իրենց բոլոր իրավունքներից: Համաձայն այդ պայմանագրի՝ դիմումատուների գույքը, մասնավորապես՝ 18.7 քմ մակերեսով տունը, 21.8 քմ ընդհանուր

մակերեսով օժանդակ շինությունը, 0.14323 հա մակերեսով հողամասի 1/13-րդ մասը, որոնք պատկանում են միայն առաջին դիմումատուին, եւ 45.5 քմ ընդհանուր մակերեսով տունը, որը երկու դիմումատուների համատեղ սեփականությունն է, փոխանցվել էր պետությանը: Եթե ոչ 2006 թվականի մարտի 28-ին, ապա առնվազն 2007 թվականի հոկտեմբերի 24-ին դիմումատուները տեղյակ են եղել կամ պետք է տեղյակ լինեին այն մասին, որ իրենց օգտին կայացված վերջնական վճիռների կատարումը դարձել է անհնարին: Հետեւաբար ներպետական դատարանների հետագա վարույթները փոխհատուցում ստանալու հնարավորությամբ նրանց չեն ապահովել: Դիմումատուներն իրենց իսկ ազատ կամքով են պայմանագիր կնքել եւ որպես փոխհատուցում ստացել են 31 069 182 ՀՀ դրամ (մոտավորապես 54 400 եվրո): Ուստի նրանց գանգատը պետք է մերժվի ժամկետից ուշ ներկայացվելու պատճառով:

35. Ավելին, Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները չեն սպառել իրենց հասանելի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները: Դիմումատուներն ազգային դատարաններում չեն բարձրացրել վիճարկվող հողամասերի եւ այդ առումով հարկադիր օտարման դիմաց ստացվող փոխհատուցման հարցը, թեեւ դա անելու համար ունեցել են իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

36. Վերջում Կառավարությունը պնդել է, որ գանգատը պետք է հայտարարվի անընդունելի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի համաձայն, այն ժամկետից ուշ ներկայացնելու եւ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հիմքով:

Բ. Դիմումատուները

37. Դիմումատուները Կառավարության առարկությունների վերաբերյալ մեկնաբանություններ չեն ներկայացրել:

Գ. Դատարանի գնահատականը

38. 35-րդ հոդվածի 1-ին կետն ունի հետևյալ բովանդակությունը.

«Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, եւ վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը»:

39. Դատարանը համարում է, որ չկա իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին Կառավարության առարկությունը քննելու անհրաժեշտություն, քանի որ բողոքն ամեն դեպքում անընդունելի է՝ ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով:

40. 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետի նպատակն է խթանել իրավական որոշակիությունը՝ ապահովելով, որ Կոնվենցիայով սահմանված հարցեր հարուցող գործերը քննվեն ողջամիտ ժամկետներում, եւ որ հնարավոր չլինի մշտապես վիճարկել նախկին որոշումները: Այն նախանշում է Կոնվենցիայի մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ժամանակային սահմանները, ինչպես նաեւ եւ՝ անհատներին, եւ՝ պետական մարմիններին ազդարարում է այն ժամկետը, որից դուրս այդպիսի վերահսկողությունն այլեւս հնարավոր չէ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [Varnava and Others v. Turkey [GC]], թիվ 16064/90 եւ մյուս 8-ը, § 156, ՄԻԵԴ 2009, եւ *Ուոքերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Walker v. the United Kingdom (dec.)], թիվ 34979/97, ՄԻԵԴ 2000-1):

41. Որպես կանոն, վեցամսյա ժամկետը սկսվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու գործընթացում վերջնական որոշում կայացվելու ամսաթվից: Սակայն, եթե ի սկզբանե պարզ է լինում, որ իրավական պաշտպանության ոչ մի արդյունավետ միջոց հասանելի չէ դիմումատուին, ապա այդ ժամկետը սկսվում է ակտերը կամ միջոցները բողոքարկելու ամսաթվից կամ այդ ակտի կամ դիմումատուի վրա դրա դրական

կամ բացասական ազդեցության մասին տեղեկանալու ամսաթվից (տե՛ս վերելում հիշատակված՝ *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* գործը, § 157, եւ *Դեննիսը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [*Dennis and Others v. The United Kingdom* (dec.)], թիվ 76573/01, 2002 թվականի հուլիսի 2): 35-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող նաեւ մեկնաբանվել այնպես, որով դիմումատուից կպահանջվի բողոք ներկայացնել Դատարան՝ նախքան այդ հարցի առնչությամբ նրա դիրքորոշումը վերջնականապես ներպետական մակարդակով կհստակեցվի: Հետեւաբար, եթե դիմումատուն օգտվում է իրավական պաշտպանության ակնհայտորեն գոյություն ունեցող միջոցից եւ միայն հետո է տեղեկանում այն հանգամանքների մասին, որոնց արդյունքում պաշտպանության միջոցը դառնում է ոչ արդյունավետ, ապա 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով՝ վեցամսյա ժամկետը նպատակահարմար է հաշվարկել՝ սկսած այն օրվանից, երբ դիմումատուն առաջին անգամ տեղեկացել է կամ կարող էր տեղեկանալ այդ հանգամանքների մասին (տե՛ս *Փոլ եւ Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [*Paul and Audrey Edwards v. the United Kingdom* (dec.)], թիվ 46477/99, 2001 թվականի հունիսի 4):

42. Այնուամենայնիվ, նշվել է, որ վեցամսյա ժամկետը, որպես այդպիսին, չի կիրառվում շարունակական իրավիճակների նկատմամբ (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* գործը, § 159, եւ *Քոունն ընդդեմ Ռումինիայի* [*Cone v. Romania*], թիվ 35935/02, § 22, 2008 թվականի հունիսի 24): Այնուամենայնիվ, ժամանակն անցնելը հետեւանքներ է ունենում դիտարկվող իրավունքների իրականացման, ինչպես նաեւ Դատարանի կողմից գործի քննության վրա: Այն դեպքում, երբ նժարին դրված են գույքի կամ տան նկատմամբ իրավունքի ենթադրյալ շարունակական խախտումներ, կարող է վրա հասնել ժամանակ, երբ դիմումատուն ինքը պետք է ընթացք տա իր գործին, քանի որ անփոփոխ իրավիճակի դեպքում պասիվ մնալն այլևս արդարացված չի լինի: Այն դեպքում, երբ դիմումատուին հայտնի է դարձել կամ կարող էր

հայտնի դարձած լինել, որ չկա կանխատեսելի ապագայում իր գույքը եւ տունը հետ ստանալու ոչ մի իրական հույս, ապա գանգատն առանց բացատրության կամ անհարկի ուշ ներկայացնելը կարող է հանգեցնել այն մերժելուն՝ ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով (տե՛ս *Չիրագովը եւ այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [ՄՊ] [*Chiragov and Others v. Armenia* (dec.) [GC]], թիվ 13216/05, § 141, 2011 թվականի դեկտեմբերի 14):

43. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նշում է, որ 2004 թվականի մայիսի 31-ին Վերաքննիչ դատարանն առաջին դիմումատուի օգտին վճիռ է կայացրել 18.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ նրա սեփականության իրավունքի վերաբերյալ, եւ որ 2005 թվականի սեպտեմբերի 30-ին Վարչական շրջանի դատարանը Ա.Ն.-ի օգտին վճիռ է կայացրել 0.14323 հա մակերեսով հողամասի նկատմամբ նրա իրավունքների վերաբերյալ: Այս հողամասերից ոչ մեկն ընդգրկված չի եղել 2006 թվականի մարտի 28-ին դիմումատուների եւ Գրասենյակի միջեւ կնքված պայմանագրում (տե՛ս վերելում՝ 26-րդ պարբերությունը): Հետեւաբար, ելնելով գործի նյութերից՝ պարզ է դառնում, որ այս վճիռները դեռեւս մնում են չկատարված:

44. Այնուամենայնիվ, չկատարված վճիռներն արդեն կայացվել էին համապատասխանաբար 2004 եւ 2005 թվականներին: Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ դիմումատուները տեղյակ են եղել կամ պետք է տեղյակ լինեին 2006 թվականի մարտի 28-ի այս վճիռների չկատարման մասին, երբ պայմանագիր են կնքել Գրասենյակի հետ եւ նկատել են, որ այս հողամասերը պայմանագրի մաս չեն կազմել: Դիմումատուներն ամեն դեպքում չեն տվել որեւէ բացատրություն այն մասին, թե ինչու են սպասել մինչեւ 2009 թվականի դեկտեմբերի 14-ը՝ իրենց բողոքը Դատարան ներկայացնելու համար: Ուստի Դատարանը համարում է, որ նրանց գանգատը ներկայացվել է ժամկետից ուշ:

45. Այսպիսով հետեւում է, որ Կառավարության առարկությունը պետք է թողնել անփոփոխ, իսկ գանգատը պետք է մերժել՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի համաձայն, ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆ ՈՒ ԴԱՆԻԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Հայտարարում է գանգատն անընդունելի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի մարտի 15-ին:

Ռենատա Դեգեներ

Ալեշ Պեյխալ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ